

ՊՈՅՏԱՆԻՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

2 քիւ մեկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 ֆր.
Վեցամսեայ 1.50 «

ԿԱՆԽԻԿ

—o—

Մանուցման տոյր
20 ամսով



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՄ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՄԱՅՆ

Rédaction du journal

„Iravounk“

VARN A (Bulgarie)

—o—

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Грмрррррррр

Եւն քրմրր

ԱՆՎՍՏԱՅԻՆԹԵԱՆ ԴԱՐՄԱՆԸ

Տ. Դիւն Դիւն՝ իրաւունքի նախորդ թիւին մէջ պատասխանելով Տ. Երուսի հարցումներուն սա եզրակացութեան եկած էր թէ՛ մեր յեղափոխական կազմակերպութիւնները լոկ իրենք իրենց մէջ միանալու չեն, այլ նաեւ ժողովուրդի անվստահութիւնը բառնալու և ազգին բոլոր ուժերը ի մի համախմբելու համար ապահովիլ տարրերը մտցնելու են գործին մէջ:

Ինչպէս բացատրած էր յարգելի յոգնածագիրը, այդ ժողովուրդի անվստահութեան գոյութիւնը տուող պատճառները մէկէ աւելի են. և մանաւանդ անցեալի անյաջողութիւններէն զատ գործուած սխալները ու զեղծումները այդ անվստահութիւնը աւելի շեշտեցին. նոյնիսկ կարծողներ կան թէ մեր դատին ցարդ անյաջող ընթացքը արդիւնքն է գործուած սխալներուն ու զեղծումներուն: Ըմբռնուած ճշմարտութիւն է թէ ամէն արդիւնք պատճառներու ծնունդ է: Մեր անյաջողութիւնն ալ ներքին և արտաքին պատճառներէ առաջ եկած է: Ներքին պատճառները մեր ու մեր յեղափոխականաց գործած սխալները ու զեղծումներն են, որոնց հետեւանքով թէ՛ աւելի արիւն թափուեցաւ և թէ՛ ո՛ր և է արդիւնք ձեռք չը բերուեցաւ. և որ աւելի ցաւալին է՝ նախկին խանդավառութիւնը մաքրու և հանգէպ գործիչներուն ազգին վստահութիւնը իսպառ կորսուելու չփոթ երեւոյթ մը երեւան եկաւ: Հայ ժողովուրդը դէպի իր գործիչները երբէք այնչափ անվստահութիւն չէր յայտնած որչափ այս վերջին ատեններս: Պէտք չէ ինքնախաբ ըլլալ, մեր մասը ուղղակի մեր վերքերը ցոյց տալու է: Օրինակ, վերակազմեալ Հնչակեանները այսօր դրամ հաւաքելու փորձն իսկ ընել անօգուտ կը համարեն, որովհետեւ ժողովուրդին վստահութիւնը խախտած է. նոյն պատճառաւ Դաշնակցականներն ալ համարձակութիւն չունին ճակատաբաց դրամ հաւաքել:

Իսկ համար ժողովուրդին միեւնոյն մասին դիմելու. և այսպէս յեղափոխական գործը ազգին էն մէկ ուժէն զրկուած է. մինչդեռ «ստուար դասակարգ մը կայ այսօր, որ սիրով կուտար իր դրամը ինքնապաշտպանութեան գործին, և թէ իրեն վստահիլ եղած չեղած. ներ երաշխաւորին այդ դրամներու գործածութիւնը» (*):

Այդ, երբ այժմու յեղափոխական կուսակցութիւնները իրենց բերանով կը խոստովանին ազգին անվստահութիւնը իրենց վրայ, ատով կը հաստատեն Տ. Դիւն ու Դիւնի ցոյց տուած անհրաժեշտ պէտքը թէ գործին մէջ ապահովիլ տարրերը մտցնելու է:

Սկիզբէն ի վեր մեր յեղափոխական կազմակերպութիւններուն գրեթե բոլոր սխալներէ մէկը այս եղած է. և այս ապահովութեան չգոյութեան պատճառաւ ալ կուսակցութեանց մէջ նիւթական անձկութիւն տիրած, լաւ մատակարարութիւն չէ եղած, և հետեւաբար կատարուած փոքրերը ու գործողութիւնները վիժած և թրջ. նամին ազատ ասպարէզ տուած են աւելի Հայ Զարդելու և աւելի սանձարձակ կեցեքելու:

Վստահութեան նիւթական տեսակէտէն զատ բարոյական տեսակէտն ալ կայ. և այս երկրորդը ոչ նուազ կարեւոր է քան առաջինը: Հոս իբր օրինակ յիշեմ թէ Յոյ. Ները իրենց ապստամբական կազմակերպութեան հիմք դնելու, էքսիքէ էքսիքան հիմնելու ատեն ազգին էն ազգեցիկ, էն դիւանագէտ ու հեռատես անձնաւորութիւնը Աղէքսանդր Իփսիլանդին ղեկավար ընտրեցին. սոս ալ ազգին միահամուռ կոչին համակերպելով, ձգեց Ռուսիոյ կոյսերական ապարանքը նւ եկաւ իր դժբախտ ազգակիցներուն ազատութեան դատին նուիրել թէ՛ իր հոնգիստը և թէ իր ամբողջ հարստութիւնը: Աղեւս ժողովուրդը

(*) Չակերտի մէջ գրուած այս խօսքը գոր մենք միշտ շնչում եմք: Պ. Ա. Վոսման եւս կը կրկնէ: (տես. Հայրենիք 133 թիւը):

Էքսիքան մազի չափ կոսկած. իսկ պատճառ չունէր, և ահա աշխարհի ամէն կողմերէն Յոյն հարստները ոսկի կը հասցնէին ընկերութեան գանձանակը, ամէն երիտասարդ Յոյն կը վազէր էքսիքին դրօշին տակ հայրենիքի ազատութեան սրբազան կռիւ կըռուելու, և ամբողջ բողոքներու ու գաւառներու յոյն բնակիչները, առանց բաց սուղիտան, ստրկական կեանքէն նախամեծար կը համարէին դիւցազնական մահը: Միևնոյն ատեն պէտք է ըսել թէ Յոյները աւելի ջարդուեցան, թէեւ քաջաբար, քան թէ ջարդուեցին. բայց Գրիտոնիայ պետութիւնք ընդ երկար հանգիստեա մնալէ ու տատանումներէ յետոյ, վերջապէս տեսնելով ամբողջ ազգի մը միահաղոյն և դիւցազնական զոհարարութիւնը, ստրկուեցան միջամտել և Սուլթանէն պահանջել Յունաստանի Անկախութիւնը, առանց կանխաւ ունէր զանազան մը ուժ իրենց կողմը ունենալու:

Իսկ մենք որ այսօր մեզ նպատակաւ դաշնագիրներու և Սուլթանէն ընդունուած բարենորոգմանք մեր դատը, շատ աւելի ապահովուած պէտք է նկատենք մեր յաջողութիւնը գրեւէ, եթէ մենք մեր անյաջողութեան պատճառ չը տանք ներքնապէս:

Սա եւս լաւ բժշկուելու ենք թէ Եւրոպայի միջամտութիւնը յառաջ բերել կարենալու: Համար անբաւական են 20 կամ 30 անձիւր բազկացած քանր մը խումբերու անխորհուրդ ցոյցերը կամ արշաւանքը. ատենք աւելի մեր դատը կորսնց ելու, ազգին ահագին մեծամասնութեան վրայէն Եւրոպայի համակրանքը նուազեցնելու և թրջ. նամին մասնակի նորանոր ջարդեր կատարել տալու ու խտուելութիւնները բազմապատկելու պատճառ կըլլան. ինչպէս որ մինչեւ ցարդ մեր յեղափոխական կուսակցութիւններու այդ կերպով գործունէութիւնները այս դառն հետեւանքները ունեցան, որմէ պէտք է խրատուինք: Մէկ խօսքով, կէտի մը վրայ անխոհեմ շարժում մը

ընել և անով ամբողջ գաւառներ մոխրակոյտ դարձնելու պատճառ ըլլալը աւելի ոճիւր է քան թէ հայրենասիրութիւն: Մեր ազատագրութեան շարժումները պէտք է ընդհանուր և ազգովին ըլլան. այլեւս ցոյցերու պէտք չունինք. ապատմական ընդհանուր և զօրեղ շարժումն է որ պիտի կրնայ մեզ փրկել, իսկ փոքր ցոյցերը թէ՛ անյաջող ու մերթ փնտաւար հետեւանք կուենան և թէ՛ լուրջ պատրաստութիւնները կը վիժեցնեն ու կը խանգարեն. այդ զօրեղ շարժումն ալ առաջ բերելու համար մեր յեղափոխական գործիչները նիւթական և բարոյական կրկին տեսակէտներով ապահովիլ տարրերը լծակցութեան պէտք ունին:

Երբ օր մը բարեբաղդութիւնը ունենանք այս պէտքին գոհացում գտած ըլլալը տեսնելու, կը վստահացնեմ մեր յեղափոխականները թէ, այն ատեն հայ ժողովուրդն ալ միահամուռ պիտի շարժի և այդ շարժումը մեզ պիտի հասցնէ անպատճառ փոփոխութեան հանգրուանը:

ԳՈՐԴՈՒՅԹ

ՅՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄԱՆԻՆ ՄԷՋ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՎՐԱՅ

1902 Յունուար 20 ի հարցապնդումը

(Շատ. նախորդ թիւէն եւ շար.)

Միևնոյն ատեն որ պիտի ուզէի հրաւիրել արտաքին գործերու Պ. նախարարը որ մեզ ըսեր թէ կացութեան վրայ ինչ կը խորհի, 1894-1896 թ. դէպքերուն վերադարձը արգիլելու համար ինչ միջոցներ կրնայ ձեռք առնել, այս բաները բնին վրայ մատնանելու պէտք կը զգամ. վասն զի, երբեմն արտաքին գործերու Պ. նախարարը լաւ գիտէ, մամուլը կը լոկէ, կամակատար, երբ մեղաւկից չէ: (Շատ լաւ! շատ լաւ! ժայռագոյն ձախալողովը!) Պէտք չէ որ պահ մը 1896 թ. ատենին պէս ըսեն թէ Եւրոպան բան մը չըբաւ, Եւրոպան կոտորածներուն առաջը չառաւ, վասն զի կացութիւնը չէր ճանչնար կոր: Իրապէս, կացութիւնը քարշիւի է նոյնքան այսօր որքան երեկ. կացութիւնը անտանելի է ու առանց մեծ

աղէտք մը բերելու չի կրնար երկա-
րիւ: (Ձախակողմէր ծախսահարկըն-
կեր):

Կարգացի հայ եկեղեցականի մը տե-
ղեկագիրը որ կերպով մը կամփոփէ
այդ տարաբաղդ ժողովուրդին հոգիին
մէջ եղած բովանդակ տառապանքը ու
յուսահատութիւնը: Հետեւեալ անցքը
անկէ կարտագրեմ:

«Բոլոր սրտովս մեր խեղճ ու աղէտ
ժողովուրդին ողբալի կացութեան
վրայ յայտնով մէկտեղ, կրնամ բռն
թէ խղճմտանքս բաւական հանգիստ
է, զի ժամանակին ու մանրամասնո-
րէն կը գրեմ ու կը հաղորդեմ բոլոր
պէտքերը ու պահանջները, բայց
մեր ըղձանքները ազգին ու իմ կամ-
քէս անկախ շարժառիթներով անխա-
նալի կը մնան, յանցանքը ոչ ազգինն
է ոչ ալ իմ: Եւ յանցանքը նախ Աստու-
ծոյ է որ մեր տարաբաղդ ժողովուր-
դին առջեւ թշուառութեան ու չքա-
ւորութեան գոռնելը յար լայնարաց
կը թողու, յանցանքը յետոյ բռն-
թեան է որ անգլիոյ, էն մարդկութեան
մէջ անհասկանալի կամ ազգային գոյու-
թեան համար շահակցութեան ու պայ-
քարումի ոգին գրաւ:»

Ու իւրաքանչիւր վաւերագրութեան
մէջ կը հանդպինք վշտերու միեւնոյն
արտայայտութեանց, միեւնոյն յուսա-
հատիչ տրտուկներու: Մտիկ բրէք
մօր մը սա նամակը:

«Ա՛հ, կը յիշեմ, դաւակ, քու հոս
եղած օրերդ: Յազան պէ՛յ քիւրաբ,
Բարչունի դաւառէն, մեզ իբր աէր
կը հրամայէր: մենք ըսես, գոհ չէինք,
վասն զի քիւրաբ մեր բոլոր ունեցա-
ծին աչք ունէր: բայց այսօր, մեր
գիւղերը գրաւողը ու զանոնք հիմնա-
յատակ քանդողը թուրքն է: Գիտես
թէ մեր գիւղին մէջ 100 հայ տնոգ-
ներէ աւելի կը գտնուէին: ոմանք
սպաննուեցան, ուրիշներ իսլամացան,
մնացածները հանգիստ չեն ձգեր,
այսօրուան գայագաւոր բարբարոս
թուրք մըն է:

«Ա՛հ, ինչպէս սիրտս պիտի կրնայ
քեզ ըսել ու լեզուս քեզ պատմել թէ
իմ սիրական դաւակ, կարապետը
իսլամացուցին, իր կնոջմովը ու հինգ
զաւակներովը: Աչքերս կուրնային,
ականջներս խոսկոյնային այս բոլորը
չը տեսնելու ու չը լսելու համար: Հա-
զիւ թէ իրենց ձեռքէն Մուրատ զա-
ւակս կըցայ ազատել: զայն զաղտնի
կը պահէմ: եթէ զայն գտնեն կամ
տեսնեն, պիտի իսլամացնեն:»

Իսլամութիւն կամ մահ, ահա թուր-
քիոյ մէջ սխտէմագիքական կեր-
պով գործողը քաղաքականութեան
թիւնը, զոր յաջած է Սուլթանը ու
որ անոր բարձր անօրէնութեանը ներ-
քեւ կը գործադրուի, բարբարոս ու
վայրաղ միջոցները մեթոտական շար-
քով մը, ուրկէ բան մը զայն չէ կարող
չեղեցնել, եթէ ոչ արեւմտեան ազ-
գեբու միջամտութիւնը, զժողով հա-
յերուն դէպ իրենց ալձակած յուսա-
հատ աղաղակներուն կարեկից ականջ
մը բանալով:

Երբ, վերջին նոյնմբեր էին, ա-
ռանց մանրամասնութեանց մէջ մանե-
լու, այստաքին գործերու Պ. Նախա-
րարին ուշադրութիւնը հրաւիրէին
այս ողբերգական խնդրոյն վրայ,
արտաքին գործերու Պ. Նախարարը
հակիրճ կերպով մեզ ալ տասնանեց.
«Բայց խնդիրը լուծելը տարօրինակէս
զգուարին է: Ոչ մէկ տեղ Հայերը
մեծամասնութիւն չեն կազմեր, երկրին
անագին մակերեսին վրայ սփռուած
են ու գրեթէ ամէն տեղ փոքրամաս-
նութիւն կը կազմեն:»

Վասն զի Պ. Տէլքասէ ուշադրութիւն
չըբաւ այն կամայական բաժանում-

ներուն որոնց թուրք վարչութիւնը
ձեռնարկեց, Հայերը խղիւղութեամբ
այն բնակչութեան խումբերուն մէջ
որոնց գտնուէր կը միացնէին: Բայց
բնութեան աշխարհագրական բաժա-
նումները Սուլթանին իրաւունքներով
չեղածեցան: Իբր օրինակ Վանի շահ-
ճագը պիտի յիշատակեմ: Եւր միւս-
լիմանները (թուրք ու քուրա) 61,000
են 64,000 Հայերու ու 6,000 տարբեր
ցեղէ կամ զանազան կրօնքէ բնա-
կիչներու զէմ:

Իրապէս, անվիճելի է թէ Սուլթ-
անի սկստապէս վրայ Սասունի Ձորե-
բուն, Ձէյլիմի կիրճերուն մէջ կայ
ժողովուրդ մը որ իր գոյութեանը գի-
տակցութիւնը ունի, ժողովուրդ մը
որ հոգեվարք, կը մահաւայ եւ որ
Եւրոպան իրեն օգնութեան, ձե-
ռնառութեան կը կոչուէ: (Շուս լաւ,
շուս լաւ, ծախսակողմէր):

Այժմ իսկ, արտաքին գործերու Պ.
Նախարարը ձեզ պիտի ըսէ Յրան-
սան, Պերլիի գաշնադիրներու ստո-
րագրողը, Եւրոպայի այդ ժողովուր-
դին նկատմամբ ունեցած յանձնառու-
թեանց մէկ վեցերորդ կամ մէկ եօթ-
ներորդ մասին համար միայն պատաս-
խանաւոր է: Կանխաւ իրեն կը պա-
տասխանեմ թէ, այսպիսի խնդրոյ մը
մէջ, Յրանսանի տարօրինակէս դի-
րին է, ոչ միայն իր անցեալովը ու
աւանդութիւններովը, այլ նաեւ իր
քաղաքական շահերուն բնութեամբը,
եթէ այսպէս կրնամ ըսել, անմիջապէս
միջամտել:

Եւրոպական ազգեր կան որոնց հո-
ղային ընչաքաղցութիւնը Հայաստանի
իսլամաւոր անոնց կողմէ միջամտութիւն
մը կատարածանքի կենթարկէ: Բայց
Յրանսան հոգ հողային ոչ մէկ շահ
ուրիշ, Հայաստանի մէջ մեզ համար
միմիայն մարդկութեան, քաղաքա-
կրթութեան ու արդարութեան շահ
մը կայ: Ու կրնամ թէ գերազանցօրէն
Յրանսական գլխաւոր շահ մըն է այս:
(Մախակողմէր ծախսակողմէր):

Վերջեւ նամակ մը կը կարդայի,
վերստին իմ հոգակալ աշխատակցին,
Իւո Արմենիայի իսլամադիր Բիլալի
ուղղութեամբ, հա՛յ ուսուցչէ մը: Սա
քանի մը ատենը միայն անկէ կար-
տագրեմ:

«Մեր գաւիներուն Յրանսական
պատմութիւնը կը գաւառաւորներ, Յրան-
սական յեղափոխութեան շրջանին
հասնելով, երբ անոնց կը պատմենք
Յրանսանի բոլոր ըրածները, մարդ իր
իրաւունքներուն ու բողոքին աէր ու
ժողովուրդները անկախ ընելու հա-
մար, մեր աշակերտները թերահաւա-
տութեամբ մեզ կը հարցնեն. այդ ձեռ
խօսած Յրանսան գոյութիւն չունի:»

Պաշտօններ Յրանսանի անունը միւս-
չեւ հոգ գտած է իր ազատամիտ ազ-
գի, իրաւանց աւանդակաւի նշանա-
կութեամբը: Արտաքին գործերու Պ.
Նախարարին կը հարցնեմ որ ըսէ մեզ
թէ այս պարագային մէջ ինչ ըրաւ
Հայերուն, արդարութեան մարդկու-
թեան, քաղաքակրթութեան, այսինքն
Յրանսանի համար: (Մախակողմէր ծախ-
սակողմէր):

Պ. Պօսթի Տ'Ասուհ, — Ոչինչ, ոչ
չինչ, բացարձակօրէն ոչինչ:

Նախագահը: Ոտքը արտաքին գոր-
ծերու Պ. Նախարարին է:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԲԵՐՔ

ՈՐԲԱՆԱՄԻՆ ՆՈՒՆԵՐ

Գործ. ժողովը շտապակալութեամբ
նուէր ստացած է 5 Փր. Տ. Հանդ
երկանեանէն իւր մօր հոգեհանգստեան
առթիւ: Եւ 5 Փր. Տ. Յ. Ս. էն կա-
ղանդի առթիւ, փափագելի է որ
պատուարժան ազգայինք հետեւին
սոյն բարի օրինակին:

(ԿՆԻՔ) Գործ. ժողովը

ԹՂԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

106807, 5 Փետրուար

Արտասահմանի հայութեան մէջ
այժմ միայն Հոնոլուլուի կը գրա-
նենք իր ազգային ու բնակչական
պարտքերուն մէջ անտարբեր ու
թերի եղող:

Հոնոլուլուի գաղութին մէջ գոյու-
թիւն ունեցող բնակչութիւն մը
որ չորս տարուան ժամանակամի-
ջոցին գրեթէ քանի մը գոնազան
անուններու տակ քաղաքացի էր,
իրեն մէջ գոնազան կարգ մը ան
հասկերու շնորհիւ, և որով եր-
կաքի բաժնուած: Վիլիս քանի
մը ազնիւ տղապիտներու ջանքով
այդ երկու բաժանումները միա-
րած էին Հայոց Միացեալ Ընկե-
րութիւն անուն տակ:

Այդէն Ընկերացիները քիչ շատ
ծանոթ ըլլալու են Հոնոլուլուի Հա-
յոց միութեան անցեալին, մասնա-
ւորապէս հրապարակագիրները:
Ուստի ևս տեղորդ պիտի սեպեմ
հին մանրամասնութեանց մէջ վրա-
նել:

Ը կերպութեան վերակազմակ
վարչութիւնը Ս. Մ. Ն. Դեմիտի առ-
թիւ (թէն շտապ մը ուշ) հան-
դէսի մը ձեռնարկեց: Մենք որ
այս անգամ Միացած Ընկերու-
թեան գործադիր մարմինէն ա-
ւելի փոքուոր հանդէս մը կը
սպասէինք, ոգորմնի ու տարօրի-
նակ երկուքի մը տուելու գրա-
նուցեալ, կարծես քէ լաւնայիրի
մը միջամտելու ըլլայինք:

Հանդէսը տեղի ունեցաւ Յուն.
վար 28 շտապ երեկոյ ժամը
8ին, երկաթուղիի մը տակ գրա-
նուց կատարած սրահի մը մէջ.
Ժամը 7.30ը կանցնէր երբ տան
կողմէն դանդաղ քայլերով կը
յառաջանային դէպի հանդիսա-
վարը. «մէն ներս մտնող իրարու
ակնշիւն կը փոփոխուի, «Ի՞նչ է
որ հանդէս պիտի ըլլայ» ուրիշ մը
կը պատասխանէր, այո՛, բարեկամ
հանդէս, «բայց ես հանդէսի մը
ոչ եմ կերպարանք չեմ տեսնար
կոր»: անդին ուրիշ մը խեղճաւա-
կօրէն «կարելի է ասկէ վերջը պի-
տի զարդարեն»: Ու ժամը 8.30ը
կը մօտենար և դեռ նախագահը
չէր եկած: Հանդէսը բացուեցաւ
Մանչեսթրի քահանային փոխ
նախագահութեամբ, որ հետեւեալ
օրուան պատարագի համար Լոն-
տոն եկած էր, մասնաւորապէս էր
ժննդեան տուն օգնականները ժող-
վուրու Հոնոլուլուի Մեծ Ժողովին
Նշանակելի դէպք մը զանց առ-
նել չեմ ուզեր: Երբ քահանան
պարտի մը հետ տաք վիճարա-
բանութեան բռնուած էր իր մա-
սին կ. Յոյսոյ թերթի մը մէջ
գրուած յօդուածներուն համար,
յանկարծ անդիէն Սեբաստիոցի
պանդուխտ մը զգուշութեամբ մօ-
տենալով նամակ մը կերկնցունէր,
քահանան կարծես կայծակնահար,

իսկոյն խապոտ ձայնով մը հար-
ցուց՝

— Ինչ է սա տղաս,

— Ձեր հայրական խնամ...

— Բայց ես հիւր եմ այս գի-
շեր վարդ մը չեմ ճանչնար, ես
միայն վաղուան պատարագին հա-
մար եկած եմ հոս:

— Բայց Տէր հայր ես ոչ մէկը
կը ճանչնամ, բոլոր մէկ փառա...

— Բան մը չեմ կրնար ընել,
աղաներուն գնալ, ես հիւր եմ
հոս այս գիշեր:

Եւ այս անկարեկիր խօսքերը
այնպիսի քահանայի մը բերնէն
կելլելի որ կարծես թէ տուր հա-
ցի կարօտը քաշող ըլլար, մինչդեռ
ամենքս գիտենք թէ՛ արտասահ-
մանի մէջ գոնազան հոգիներէն ա.
մենէն բազմաթիւ ու ամենէն հա-
րուստներէն մէկն է ինք:

Հանդէսը բացուեցաւ քանի որ իշխալ
քահանայի փոխ նախագահու-
թեամբ, «Տէր կեցոյ» մողթան.
քով մը, որուն անմիջապէս յաջոր-
դեց անգլիկէն դաշնակ մը, Օր.
վ. Յակոբեանէ, անոր յաջորդեց
Պ. Ա. Կ. Կրկուտեան «Ձայն տուր
ո՛վ ծովակ» կիւրծով և այսպէս
հայերէն ու անգլիկէն երգերէ
վերջ, բրօֆ. Թուրման իր բա-
նախօսութիւնը սկսաւ. չեմ ծան.
բանար անոր վրայ, վստելի անի-
կայ ճառ մը ըլլալէ աւելի, պատ-
ուելիական քարոզ մըն էր, որ
չէր կրնար գոհացնել այդ գիշեր
հոտ հաւաքուող հանդիսականները:
Բրօֆէսթօրին քարոզէն վերջ քանի
մը վարկեան գաղաք մը տրուե-
ցաւ, ուր թէյ և քէյք պիտի
բաժնուէր հանգիստաններուն:
վարչութիւնը հոտ ալ իր խաղու-
թիւնը ցոյց տուաւ: Բոլորովին
անկանոն, առանց կարգ ու կանո-
նի բաժնուեցան այդ թէյերը ու
քէյքերը. որը բնաւ չը խմեց կամ
չը կերաւ, ոմանք երեք չորս անգամ
խմեցին և կերան, ու այս վիճիւն-
ները, չը մոռնանք ըսելու, աւելի
Անգլուհի և Հայուհի զեպուներ
էին, ու անդին՝ Բրօֆ. Թուրմայ-
եանի որբերէն շատերը որ ահա-
գին հեռուորութենէ եկած էին
և որոնց կոկորդինի գոթէ պատ-
ուած էր երգելէ՛ անօթի վերա-
դարձան տեղերին:

Այս միջնադարէն վերջ նորէն
սկսան երգեր ու դաշնակահարու-
թիւններ, մինչեւ որ հանդիսա-
կանները կամաց կամաց ցրուիլ
սկսան, և ինչ որ ամենէն ծիծա-
ղելին էր, հանդէսին փակուելէն
առաջ, վարչութեան անդամներուն
իրարու րրած հրապարակային
րէքլամներն էին. մէկը միւսին
վրայ կը բարդէր հանդէսին յե-
ղովթիւնը, միւսը միւսին: Մենք
կապաւելինք որ, ինչպէս ամէն ան-
գամ, նոյնպէս այս անգամ ալ Ա.
կարկուտեան անաշուօրէն գրե-
րայ մասին, չեմ կարծեր որ զին-
քը արգիլած ըլլայ այս բանը ը-
նելու իր երգած երգը, որ պէտք
է խոստովանիլ թէ ամենէն աւելի

հայ սրտերը թռչող հանդերձն էր :

ԴԵՏՈՂ ՄԸ

ԲԱՐԻՉ 1 Փետրուար

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԵՐԹ ՄԸՆ ԱՆ . — Հաստատագրող աղբւրներէ կրիմանայի մէկ երկու շաբաթէն Բարի- զի մէջ լոյս պիտի տեսնէ հայերէն նոր հանդէս մըն ալ որ առայժմ ամ- օրեայ լինելու է եւ ժամանակէ մը յետոյ 15 օրը անգամ մը պիտի հրա- տարակուի, խմբագրներն են երկու պարոններ որոնք 15—20 տարիներէ ի վեր հայ արեւմտեան գրական հրապարակին վրայ եւ մանաւանդ Կ. Պոլսոյ հայ մամուլին մէջ նախանշելի դերք մը գրաւած են : Հանդէսը որ երկուսնակ 16 էջերէ բաղկացած պի- տի լինի, պիտի պարունակէ միայն գրական նիւթեր, բայց գրականին բոլոր ճիւղերն : Արդէն իրենց գը- լերէ կէսը շարուած է, ամբողջ ա- ռաջին թիւը լոյս պիտի տեսնէ հա- լանարար, յառաջիկայ շաբթու. մէջ : — **ԲԱՐԵԳԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐ-** ծական ընկերութիւնը կը պատրաս- տուի յառաջիկայ մարտ ամսոյ մէջ եւ իրենց Պարահանդէս մը տալու ի նը- պատ Բարեգ եկող գացող հայ կա- ռօտեակներուն : Կիմանայի թէ ար- դէն մի քանի բարձր անձնաւորու- թիւներ իրենց հովանաւորութիւնը խօստացած են այդ երկկոյթին յաջո- ղութեան համար : Արդէն յատուկ մասնախումբ մըն ալ կազմուած է հայ եւ ֆրանսացի անձնաւորութիւններէ, որը մասնաւորապէս այդ երկկոյթի կազմակերպութեամբ պիտի զբաղի, կը մաղթենք որ անցեալ տարուան յաջողութիւնն ունենայ այս տարուան երկկոյթին ալ :

— **ԱՐՁԱՆԵՐՈՒ ԾԱՐԲ ՄԸ .** — Բարեգ քաղաքը մէկ քանի ամսուան մէջ պիտի տեսնէ կարգ մը արձաններ որոնք պիտի կանգնուին Ֆրանսայի ամենափայլուն երեք գրողներուն յի- շատակն անմահացնելու համար : Այդ երեք անմահանալիներն ուրք արդէն իրենց մենեղէն եւ նոյնիսկ կենդա- նութեան ժամանակէն ի վեր անմո- ռանալիներ եղած են, հետեւեալներն են՝ Վիկտոր Հիւգօ, Հոնորէ Բալզակ, եւ Ալֆրէտ Կլոտէ :

Այս երեք յայտնի գրողները միայն Ֆրանսացի եղա՞ չեն, որոնք բացի Ֆրանսացի լինելէ «Բարեգի» եւս ե- ղած են (թէպէտ ուրիշ տեղ ծնան եւ մեծցած կրնան լինել, այդ նշանա- կութիւն չունի) բայց մը որ աւելի մեծ յարգ ունի կարգ մը անձերու աչ- քին : Բարեգի ընկող կը հասկնան անոնք որոնք Ֆրանսայի սէրուն մայ- րաքաղաքին սիրահարուած, անոր մէջ եւ անոր կեանքով կապին, այ- սինքն անոր աշխարհիկ, փողոցային հրապարակային, սալօնական, գրա- կան, թատրոնական, գիտական եւ վերջ ի վերջոյ քաղաքագիտական եւ քաղաքական կեանքով կը հետաքը- րուին : Անոնց աչքէն չվրիպեր քաղա- քին ամենափոքր աղմուկը, ամենա- պզտիկ փոփոխութիւնը, մէկ չնչին արեւածը կամ զիպուածը... անա այս է «Բարեգի», ճշմարտը (?):

Հիւգօ Բարեգի փողոցներուն վրայ հրացողներէն մին եղած է. առտուը- նէ մինչեւ իրիկուն, կըսեն, Բարե- գի փողոցները կը չափաչափէր, վը- տանգէ մը պըծած մէկու մը պէս ա- րագ արագ գալիւով, վազելով... Բարեգի ամենափոքր փողոցները, անցքերը, տունները, խանութները գիտէր, տեսեր էր, քննած էր...

Երբ ծերացաւ հանրային կոտորու- վերնայարկը իրեն գիտարան ընտրած էր, իւր սիրելի Բարեգն ուսումնա- սիրելու... Եւ անա այսպէս նա թո- ղուց Թշուառներ Բարեգի «Նոսո- ճամբ» երկուքն ալ Բարեգի կեանքէն : Իւր արձանին բացումը տեղի պիտի ունենայ փետր. 26ին : Որովհետեւ Վիկտոր Հիւգօ ծնած է 1802 փետր- ուար 26ին, այս տարի միեւնոյն թուականին Բարեգ կամ ամբողջ Ֆը- րանսա պիտի տեսնէ մեծ բանաստեղ- ծին թէ հարիւրամասեր եւ թէ անոր փառաւոր արձանին բացումը : Պաշտո- նական տօնը տեղի պիտի ունենայ Պանթէոն եկեղեցւոյն մէջ, ուր կը դնուի բանաստեղծին գերեզմանը, երկու գլխաւոր ճառեր պիտի խօսուին մին Ֆրանսական կառավարութեան կողմէն եւ միւսը Ֆրանսական Կա- ճառի կողմէն : Յետոյ երկեցողու- թիւն նուազեցութիւն, արտասանու- թիւն եւս :

Հոս-Ուստ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Վառնայի Ազգ. վարժարանի պար- տուց բարձման համար Ռուսմանիոյ ազ- գայիներէն հանգանակուած գրամի գումարը միայն հրատարակած էինք : Բայց հանգանակութեան մասնակցող մէկ քանի քաղաքներէ եղած խնդ- րանքին վրայ, նրժ. Տէր Սարգիս Հայր խնդրեց մեզմէ նոյն արտուած հետեւեալ ցանկը նշանութեամբ հրա- տարակել :

Ս. ՅՈՒՅԱԿ Պրախլայէ

Տ. Տ. Պետարպեան 20 ֆրանք. Բիւ- ղանդ Իւղաբերան 20. Իմանիտ 5. Ա. Թիւպէնտեան 5. Արթին Իլիէս- քու 5. Բոնարիթ Մաքրի եւ Ընկ. 5. Տօթթ. Պարոնքա 5. Տկ. Եղգուպ եւ ոմն Ե. Գրիգոր Գեորգեան 5. Պետրոս Կիրակոսեան 5. Նազարէթ, Ղուկիւա- նոս Աւետիսեան 4. Լէմզեան, Ոսկիւն եւ Նիկողոսեան 3. Նշան Եարապետ- եան 4. Ասատուր Յակոբեան 5. Ենովք Արգարեան 5. Կարապետ Հալաճեան 5. Արթին Սալաւորեան 5. Գառնիկ Ֆէր- մէթեան 2. Համարձեւ Պետրոսեան 5. Մկրտիչ Արթինեան 1.50. Միսաք Բարսեղեան 5. Մարկոս Յովհաննէս- եան եւ ոմն 5. Արթին Միքայելեան 5. Սարգիս Թադեոսեան 2. Նշան Զիւրեան եւ Սալիկ Լիւրճեան 5. Գա- պար Թօփիկեան, Բալաճեան 2. Վա- հան Մամիկոնեան 2. Գրիգոր Աբրա- համեան 2. Արթին Յովակիմեան 4. Սալիկ Յովհաննէսեան 5. Գրիգոր Դանիէլեան 10. Յովհաննէս Մելքոն- եան 5. Արտաշէս Իւղաբերան 10. Սերոբէ Սվաճեան 5. Գրիգոր Առա- քեհեան 5. Գալուստ Էգնայեան 5. Մէ- լիք Չափուշ Մամիկեան 10. Լիւսո Չափուշ 5. Պաղէ Մըխ 5. Մանուկ Վարդեան 5. Նիւրո Մանուկ 5. Սան- տիլ Վարդան 1. Վարդան Միթար 1. Յովհաննէս Հարո 1. Մովսէս Սրբաթ 2 Սարգիս Թիոնո 1. Յակոբ Մանակ 2. Գրիգոր Մովսէս եւ Յարութիւն Մանակ 1.50. Յարութիւն Մուրատ եւ Յովհաննէս Սալաւորեան 2. Ներսիս Ասատուր եւ Եղօ Յովհան 1.40. Տիգ- րան Պապեան 2. Պետրոս Մանուկ 1. Գրիգոր եւ Մէլիք Եղարք Ստիփան- եան 2. Սարգիս Սաղոմեան 1. Մէլիք Մանուկ եւ Աւետիս Մարգարեան ըն- կերք 5. Յակոբ Յովհաննէսեան 2. Ղուկաս Եղիազար 2. Առա. եւ Տօնիկ 1. Բարունակ Յարութիւն 2. Սալիկ Ղա-

զար 1. Իսախէլ Մուրատ 1. Նշան Յովհաննէս 1. Միթար Սեդրաք 1. Մարոպ Մուրատ 1. Գրիգոր Առաք 1. Յակոբ Չափուշ 2. Կարապետ Գ. Գրո 1. Պետրոս Միթար 1. Մարատ Սալիկ 1. Մկրտիչ Կարապետ 1. Գեորգ եւ Յարութիւն Կեպեան 2. Գումար 269. 40 ֆրանք. (Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ ուրբաթ Պոլսոյ պատ- րիարքարանի խառն ժողովը զբա- ղեցաւ զլիւսաւորաբար Կիլիկիոյ կաթողիկոսին հրաժարականին խնդրով, եւ վերջապէս որոշեց Ս. Երէցեանի հրաժարելուն պատ- ճառները բացառող գրութիւն մը ուղարկել Ս. Կիլիկեան այս պաշտօ- նական նամակին պատասխանեց թէ արդէն իր հրաժարականին պատճառները թուելով նամակ մը ուղղած է պատրիարքին, ուստի կրկնելու պէտք չ' տեսներ : Իսկ վերջին ուրբաթ խառն ժողովոյ կ'օն. անդամներէն մեծագոյն մա- սը բացակայ լինելով, վերջնական որոշում մը չէ տրուած, այլ այդ մասին ստացուած գրութիւնները աչքէ անցուած են :

— Կիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդ Գեոր. Կիրակոս եպիսկ- օպէսը Երուսաղէմայ պատ- րիարքին միջնորդութիւնը խնդ- րած է որ հաւուկ Ս. Երէցեանը Տ. Յարութիւն պատրիարք գրած է Ս. Երէցեանի թէ Երուսաղէմայ միաբանութիւնը մտադիր է ուրիշ մէկը Պոլսոյ փոխանորդ կարգել եթէ ինք պ'զէ իր հրաժարակա- նին վրայ Սա եթէ ստույգ է, սպառ- նալիք մըն է, բայց Երէցեան սրբազան գիտէ թէ այդ պաշտօ- նէն զրկուելով խիզճ չի մնար, ուստի իր որոշումին վրայ ո է ազդեցութիւն չէ կարող ընել կը կարծենք այդ սպառնալիքը :

— Պատրիարքը անցեալ օր կըր- կին Երուսղի պալատը գտնուէ Բայց չի գիտցուիր թէ ինչ խնդ- րոյ առթիւ :

— Պոսթօնի Որբախում րնկե- րութեան սարքած հանդէսին հան- գանակութիւն մը տեղի ունեցած է 200 տղար հաւաքուած է :

— Ուստի 2 լիւթոյնի Որբա- խում րնկերութեան մասնաճիւղը խնդրէ մը մէջ նուա մը եւ նա- րին մը աճուրդի դրած է, որմէ 66.35 տղար գոյացեր է :

— Բրօզիտէի մէջ հրապարա- կային ժողովի մը առթիւ 400 տո- լար հաւաքուած է ինպիստ Ս. Երէի Կիլի. վարժարանի եւ խա- բերդի որբանոցին :

— Պոսթօնի մէջ ինպիստ Սա- սունի ներկայացում մը կը տրուի որուն հասոյթը Զ. Յ. Դաշնակցու- թեան միջոցաւ Սասուն պիտի ղրկուի եղեր :

— Կոչնակէ կը տեղեկանալք թէ Նի-Եօրքի հայերու թիւը

գրեթէ 2500, ընտանիքներու թիւը 250 է : Ունին երկու եկե- ղեցի, մին ազգային եկեղեցի, միւսը բողոքական, գերեզմանա- տուն գրադարանի Միութիւն մը Որբախում տիկիներու ընկեր. եւ Հայկ. Միութեան հաստատութիւն- ները :

Նիւ-Եօրքի հայոց մեծագոյն մասը գործաւորներ են, կան նաեւ 15 գողգի եւ այլ վաճառականներ 25 արհեստաւոր, 15 բժիշկ, 4 ատամնաբու, 2 դիպագործ, 2 փուտաբան եւ 1 ակնագործ :

— Տիգրիսի վիճակին կրօնական տեսանք ընդհանուր շրջաբերակա- նով մը արգիւեց ըստաններուն հոգեհանգիստ կատարել օտարա- դաւաններու համար, բայց Ս. Հայ- րապետի վերջին հրահանին :

— Սիւրստիոյ Զարա գեղա- քաղաքին մէջ կրօնական վիճի մը պատճառաւ բողոքականութեան տարածման լուրեր հասած է Պատ- րիարքարան, որ Սիւրստիոյ ա- ռաջնորդին յանձնարարեց անձամբ երթալով խնդիրը կարգադրել :

— Կարէժի Հայուհետեց ընկե- րութիւնը Ստրպատականի նա- հանգին մէջ մինչեւ հիմա 12 նոր վարժարաններ հաստատած է :

— Վառնայի Երկսեռ Ազգային վարժարանին ինպիստ պարահան- դէս մը պիտի տրուի յառաջիկայ փետրուար 13ին. հանդէսը շքե- ղապէս պատրաստելու եւ կարգա- պահութեան հսկելու համար կար- գադիր մասնախումբ մը ընտրուած է :

— Վ. Ս. Պետ Ս. Կիլիկիոյ հայ վարժարաններէ միոյն մէջ պաշտօնավարելու համար կը փո- տրուի ուսուցիչ մը, որ կարող ըլ- լայ զաստիստել Հայերէն, Ֆրանսե- րէն եւ ուրիշ մէկ երկու առարկաներ : Ամսաթուակը գոհացուցիչ :

Փափաքող պէտք է զիմէ խմբագ- րութեանս :

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայրենիքի խնդ. Պոսթօն. — Ձեր սրտին անդորրութիւն տալու համար կը յայտարարենք թէ մեր բոլոր բա- ժանորդները Իրաւունք շարունակ կը ստանան, եւ կաւելցնենք միեւնոյն ատեն թէ նոր տարեշրջանին անոնք աւելցած են իսկ կը ցաւինք որ Տեղ- լոյս խաղաղակարգին սուտերը կար- դացած ատենիդ չէք հաճեր ձեր գրա- սեղանին վրայ գտնուող Իրաւունք ալ աչքէ անցնել, որով ուստի մը ար- ձագանք ըլլալէ պիտի փրկուէք քայքայու աղմուկները ունեցեր էք բռնիւ զբաղու բաժանորդները Իրա- ւունքը եւ կը դարձնեն :

Կարգացէք Իրաւունքի 90 եւ 92 թի- վերու մէջ նոր Զոհեր եւ Կախաղանք խորագրով խմբագրականները. իսկ 91 թիւը Ազգ. Լուրերու բաժնին մէջ եղած Բիւզանդիոնէ արտաստուած մըն էր, որուն առթիւ գրուած խմբագ- րականը նիւթի առատութեան պատ- ճառաւ յաջորդ 92 թիւով հրատարակ- ուեցաւ : Իսկ Ֆիլիպէէ ձեզ գրուած մասալը միայն քերտիլ կարծէ :

— Տ. Ե. Բարեգ. — Ձեր ուղած յա- լելուածը չի կրցնիք գտնել : 1 ֆրանքը կը յանձնենք ձեր հրամանին :

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻՍ.

Սթանպօլ ճինալէթ մահքեմէսի
Տոմատ Մահմուտ բաշայլ զըյու
պէն իտամա մահքիւմ իթմիյ տիր :

— Մամօս ատաւորներն մէծիսիս
մէպոստան ազալարը պիր լալիհէ
իլէ Սուլթանա միրաճատիլէ , ա-
տաւորն բրէնսի օլտն Սիխալաքի
պէլին իտարէսինտէն թէշէքքիլէր
պէլան իտուպ , մերգուլմըն թար-
տընը վէ հախտօ՝ պիր զօմիսիօնը
մախտուս թալինի իլէ թէշէքքի-
լէրիին թահգիգիհէ միպաշլէթ
օլընմասընը թալէպ իթմիշլէր
տիր :

— յնուրիսնա գարշո կենն
Թիւրքէր իլէ միւնասէպոթը օ.
լան պիր ճէմիլէթի ֆէուստիյէ
Սլոանպոլտա պոլլընմըշ օլմասը
սէպէպէ, Սոյլա Գուստրի էֆէնտի,
Սուրի պէյ վէ իսմայիլ պէյ էփ-
րօքոյա գաշճիլյար տըր :

— Շէտիտ գըշ : Սիվաս վիլայեթի հիւքիւմ իւտէյօր : Սիվաստան կիւրիւնէ կիթմէքտէ օլան 60 քիշիլիք պիր քէրվան , 200 հալվանաթ իլէ , Մուզաֆֆէր նամ մահէլտէ կիւրիւնէ 3 սահաթ գալարագ , գարըն չօզըղը վէ սօվուղըն շիտտէթի սէպէպիւսէն եօլտա գալմըշ տըր Սիվաստէն կէճտէրիլէն իմտտաճըլար գարլար ալթընտան 50 քիշի ձըգարտը , պունլարտան ալթըր վէ հալվանլարտան օնու էօլմիւշլէր իտի . տիկէրլէրի տախի էշիտալարընը գարլար իշիւտէ պրրագուպ կիւճ հալ իմտտաճըլաղըն մուսվէնէթի իլէ Սիվասա ալտէթ իտէրլէր :

— Միս Սթօնը գուրթումով
 իշխն շագիւէր իւն պաշխանմը օ-
 լան մուսապէրէնին գաթը օլըն.
 մալը թիւք հիւքիւմէթինին մս-
 նիւէր չըգարմաոնտան աօլայը օ-
 լուպ, վաշինկթօնլա հիտտէթ
 հասըր իթմիշ տիր. վէ հրսս օլըն-
 տըղընա կէօրէ՝ Մ. Ամերիկա հիւ-
 քիւմէթինին պու մէսէյէ իշխն
 Պապը Ալիյէ գուրը շէտիտ թէտ.
 պիւլէր էլէ ալաճաղընը թէլէկրասֆ
 պիտիրմիշ տիր:

— Պուկկար կապէթալարտա թափ-
սիւաթլէ եազըլտըղընս պինանն,
Սատրազաժ քիւչլւք Սալիտ բաշչ
պահրիյէ նաշրըը Հասան բաշա.
Նըն միւսրիֆլէ միւրթէքիպլիկին-
տէն տուլլը Սուլթանա իշթիգա
իթմիշ ուտըղընտան. Սուլթան
պիր իրոտէ իլէ, պունտան սօ՛րա
Սալիտ բաշանըն բէյի ալմատըըճ
պահրիէ նազըրընըն հ'չ պիր թա.
րաֆա բարա սարֆ իթմէսինի
էմր իթմիշ, Բիւշինք Սալիտ բա.
շա պահրիյէ նէզարէթինին մու-
հասէպէսի թէտպիգ իտէրէք, 1898
սէնէսինտէն շիմտիյէ գաւաթը Հա-
սան բաշանըն տոնանմա թէշ-
քիլի իշիւն 310,650,000 ֆրանք

տարֆի իթմիշ օլտըզընը, վէ պու-
մէպլաղա մուգապիլ հիշ պիր Եէնի
վաքօր Եաբտըրմուտըգտան մաա-
տա, էսքիլէրի տախի թաւիլի իթ-
տիրմէմիշ օլտըզընը թէպլիւն
իթմիշ, վէ իշին պու զսրիպ հա-
լի Սուլթանա արղ էթմէսինտէ,
շու ճէվապը ալմըշ, «պուհու պէ-
նիմ տօսթըմա չօգ կէօրմէլինիշ»

Մակեդոնիա հայաբնակարար

Պալկարիատան 16 ֆիշիկիք պիւր
չէթէ ՕՏրիտ ճվւրբնոտ կէօ
րիւնմիշ թմալէ, թիւրք տաքեր-
լէրիւնտն թաւգիւ պլրնմազտա
տրր:

— ԵՆԻՒ-Ք աղայր ճիգսարբնտա
(Ալպանիտ) Արնալտառալարն Սրբա
լարա գարչր ճիճալէթ ու իւսպա.
սէթլէրի տէգոմ իթմէք տէ օլտը
ղը՛ը թէլէհրն փ պիւտրիթյօր :

— Պաշկարաւորքն Ս. Խնունդ
 Եօրթուսընտա՝ Արնապուտաւ Թ
 րաօվա նամ քէօյլեն իւզլրինէ
 հիւճիւմ իթմիլլէր իսէտէ, խրիս
 թիւանլար քէտիլէրինի մուհա
 Ֆուզա իթմէք իշիւն սիւսհլաճըպ
 էվլէրտէ գաբանուրազ Եօրթուր
 կէշիւրմիշ օլադզլարը Ֆրէզէրէնտէն
 պիւտիւրիլիշ տիր :

SU. Խ Ի Լ Ի Յ Է

Կէշէն չորշտակս կիւնիւ վառ-
նատան Պուրկազս կիթմէքտէ օ-
լան Ջարեկվառ նամ բուս վաթօլը
Փուրթունայա թութուրուպ, Պուր-
կազ եագընընտա գայալարա չար-
բըլժը ալը: Փաղաթ տէր հոյ
իտաթ եէթիշուպ, եօճըլար,
թայֆէլէր վէ բօշթա չանթալարը
գուրթարմըշ տըրլար:

— Նարոտնեաք (Սթօհլովիսթ)
բարթիսի րէյիսլէրինտէն Ս. Կէ-
չօֆ բազար Կիւնի շէհրիմիզ Սա-
էտինէնիէ սալոնընտա, խընճա-
խընճ էհալի հազըր պուլընտըը
հալտէ իրաաը նութգ իտուպ,
շիմտէքի Ծանքովիսթ գապինէսի-
նին շրօկրամընը գրիթիքա էլլէտի,
վէ ազշամ թըրէնի իլէ Սօֆիայա
միլիթվէթճիհէն հարաքէթ իթտի,
իհրա օլըն՝ ճաք եհէնի ինթիխա,
պաթ իշիւն հէր պիր բարթի քէ-
մալէ խահիշէ չալըշմաքտա ոըր
Ֆրագաթ վարնա գազաւընտա
Ծանքովիստլէրգն էքսէրիյէթ իրա
գազանաճալարընա իւմիտիմիզ
եօքտըր, պու տէֆա էն Ղիյատէ
Սթօհլովիսթլէրին գազանմասը
մէմուլ օլընըր :

ԱՃԵՄԻՍՏԱՆ

Աճէմիտանուա բօսթահանելէ.
Բին իտարէսի հիւքիւմէթ Պէլճի-
գալլարա իհալէ իթմիշ տիր,
Շայէալթա կէօրէ, տիկէր թէսի-
սաթլար տալսի Պէլճիգալլուրն
հէտի իտարէսինէ հափալէ օլընա-
ճագ ըմրշ:

U h U S r h U

Աւստրիա վէ Մանսթրիստան վէլէն
ահալը արշիտիւք Յորանց Յէրտի.
նանտ Պ'ր իլէ կէօրիւշմէք իշիւն
իւթըսպուրիւ կիթմիշ տիր : Ար-
շիտի, քին պու եօլճըրդընա բոյի.
թիգաճա պէօյի, ք էհէմիլէթ վէ-
րիլմէքտէ տիր : Նօլոսի տիյօ, քի
իքի տէվէթ պէյիիտէ իթիլաֆ
վէ եազընիլէթ հըսս օլընըյօ :
Աւստրիա վէ Բուսիա Ալմանիանըն
եհնի կէօմրիւք թարիֆէսի սէ-
պէպի իլէ պիր թիճարէթ ահա-
նամէսի թանգիւ իթմէք թէտպի-
րինտէ տիրլէր : Քէզա Պալզոն մէ-
սէլսիննտէն տօլալը պու իքի տէվ-
լէթին ուլուշմասը բօլիթիգաճա
պաղըր մի չքիլալթը հալլ իտէպիլէ-
ճէք տիր :

P N h U h U

Չհիլիէր Սիպերիայա հիճրէթ
էթմէէ պաշամըշար տըր, Պու
տէրէճէ Գալապ ուըզլէ Չհիլիէրին
Բուսիայա տօլմասընա Բուս տէվ.
լէթի Խօշնուտիյէթլէ պազմազ
տա տըր. զիրա Սիպերիա չէօլէ.
րինտէ էհալի բէք ազ օլմազլէ, հիւ
քիւմէթ ֆաիտէ կէօրէմէտիքտէն
մատա զիյատէ մէսարիֆ իթմէքտէ
տիր, Չհիլիէր իսէ չալըշքան վէ
զալրէթքէշ պիր միլլէթ օլուպ,
չէօլլէրի միւնպէթ օվտյարա թահ.
վիլ իտէպիլլէճէքլէր, պու եօլլէ
հիւքիւմէթին վալիտաթը տախի
արթմաճազ տըր:

Կովկասիանըն Կիւմրի շէհրին-
տէ (Ալէքսանտրօքօյ) Յակոբ Դա-
ւիթեան և Ռուբէն Կարապետեան
իսմինտէ իքի քիշի գալպ լուպլի-
լէր ետաւըշ օլմագ ճիւրմիւ իլէ
թուլթուլուպ Սիպերիայա սիւրիլ-
մի շլէր : Պունլարըն հանընտան
806 գալպ լուպլի վէ պիր թագըմ
ալէաթ պուլընմըշ տրը :

ՃԷՄԻՄ ՊԻՐ ՎԱՍԻՅԷԹ.

Բուժ միլիէթին տէն Գէֆալօ-
նիալը միւթէ վէֆա Բ Դնայի վալիա-
նօնը վասիյէթ իթ տիկի սէրվէ-
թին մըգտարը շու հօլտա իսպար
օլըմօգտա տրը 1,500,000 ին-
կիլիզ լիւրաը Եռնան տէվէթինէ ,
500,000 լիւր քէնտի եկէլէրինէ
500,000 լիւր վաթանը պուլընան
Գէֆալօիայա , քիզա պաշգա իւլ-
սըվարընա խալլը մէպլաղ թէրք
իթ իշ տիր : Միւթէ վէֆանըն րէս
մինտէ Գէֆալօնիատա պիր սանէմ
տիքմէք իշին քարա թէճէմիւ
օլըմօգտա րմը :

ՊՕԷՐԼԷՐ

Ինկիլթերա Հելսնտա տեղկե-
թինին սուլ թեքլիֆինի պիր նե
զաքեթլե ըտտ իթտի, տեյիլե
պիլիր. պոնունլե պերապեր տո-
հա սուլհէն մուհարեպլյե նիհա

յեթ վերեպիլմէք իչին տաճա
իւմիւտէր գաթը օլընմատը , Լօրտ
Սալպարի սօն պիր նութգընտա
շու մաալոէ սէօլէ-Ռիշ տիր .

«Հօլանտանդ» պիղե տօսվածն է
տույկուլարը օլտըրընր թաստիգ
իտերիմ. ֆուգաթ պլիմեմքի անըն
շուղարիպ թեշեպպիսի նե՞ մագ-
սեսե մեպնի տիր. իպկիլթեբա
պուշլամըլ օլտըղը մուհարեպեյե
նիհայեթ վերմելի տիր. մուսալե.
հեի մեսերբեթլե գապուլ իտեր
ֆագաթ գրալըն վե տեվլեթին
հուգուղը թեմին օլընմագ շարթը
իլե: Պիլ ախերե, տետիքի իր-
լանտատա ինկիլթեբանըն մեվգը-
սընը գապի թուժագ հեհուպի-Ուֆ.
ըրգա մուհարեպեյեսինտեն տահա
եղլեմ պիր նոգթա տըր»:

— Պի՛ր ինկիրիզ ալալը պի՛ր
պէօլիք Պօէրլէր իւզէրինէ հիւ-
նուս իթմիշ. պօէր զօմանտանը
վէսէլա վէ 5 պօէր էօլմիշ վէ 6
եարէլէնմիշ, պազըլար տախի նէ-
սիւր ալընմիշ տըր, վէ ինկիրիզէ-
րին թէէֆիտթը էհէֆիտթիթսիզ
օլընտըղնը Լօրտ ֆիշնէր պիլ-
տիթմիշ տիւր :

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Վառնայի մեր այն նուագ բարեկեցիկ ընթերցողները, որոնք կը փախաբխ չարունակ թերթիս ամեն թիւերը ստանալ, թող հաճին բաժանորդ գրուիլ, որպէս զի մեր ցըր-ուիլը պարտաւորութի օրր օրին թերթերը իրենց հասցնել: Մենք ալ անոնց զիւրութիւն մը տալու համար եռամսեայ եռամսեայ երեքական ֆրանք բաժնեկի կընդունինք իրենցմէ: Իսկ ողորք որ Փետրուար 1էն բաժանորդ նշանակուին միայն 2 ֆրանք տալով իշխեալ Ապրիլ 1 վճարած կըլլան: Այս նոր բաժանորդներուն մէկ մէկ Օրացոյց կը նուիրենք:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-
ԿԱՅԱՆ ։ Այս երգարանը Բ. անգամ
սպագորեւելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ ֆակառակ գնոյն
աժանոյթեանը կը պարտաւորէ ազ-
գային հին հւ Նոր գրեթէ բոլոր եր-
գերը ։
ԳԻՆ 1 ՅՐ.

ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱԾԸ,
Պուկկարիոյ ազատութենէն առաջ
Պուկար Ժողովուրդին Թուրքերէ կը-
բաժ տառապանքները ու անոնց չիստ
ու կացը կը պատկերացնէ :
Դիւն 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁՈՂԵՐ : Պատկեր մը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
դրեց Լ. Նահապետեան :
Զեղչեալ Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար պէտք է գիտել Խրատունիի (ամբարշտութեան, բալթի ծախքը 10 նական սանթիմ միաստեղ զրկելով. իսկ գիրքերու. արժեքին համար, եթէ ուրիշ չըլլաւ թիւնիւրն պակսին, կը նշուեն ի նամակագրօյմ 10 0/0 գեղջով :

Одговорникъ Н. Драгулевъ

Печ на Хр. Н. Войниковъ—Варна